



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ



ԱՐԴԱՐ

ԾԵՐՈՒՆԻՆ

84

2-66

1904

Ս.-ՊԵՏԵՐԱՍՈՒՐԳ

19 NOV 2010

2005

ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԳԱՐԱՆԸ

Հրատ. Տիկին Զարեհի

12 NOV 2009

84

25657

ԱԿ

Վիկտոր Հյուզո

ԱՐԴԱՐ ԾԵՐՈՒՆԻՆ



1003
13141



Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
'ԳՈՒՀԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻԳ' ՏՂԱՐԱՆ
1904.

12.06.2013

800504

6308



ԱՐԴԱՐ ԾԵՐՈՒՆԻՆ:

Ս.

ԱՄԵՆԻՅԱՆ ԱՐՅԱՄԱՐՅՈՒՄԸ

Հոկտեմբեր ամիսն էր. արևը նոր էր թեք-
ւում դեպի արևմուտք: Փրանսիական փոքրիկ
քաղաքներից մեկի փողոցներով անցնում էր
մի անձանօթ մարդ: Նրան պատահող քաղա-
քացիներն անհանգստութեամբ զիտում էին
անցւորականին. որովհետև սա մի տարօրինակ
տեսք ունէր.— գլխարկը քաշած էր ճակատին,
երեսից շրի նման կաթկաթում էր քրտինքը:
Կոպիտ դեղնագոյն չթէ շապիկ տակից երե-
ւում էր թաւոտ կուրծքը: Վզին կապել էր
դոյնը տուած մի թաշկինակ և ուսերին ծած-

Дозвол. ценз. С.-Петербургъ, 22 Юни 1904 г.

“Пушкинска Скоропечатни“, Лештуковъ, 4.

կել կարկառուած կանաչագոյն մի ծածկոց: Շալ-
վարը, որ տեղ-տեղ իր նախկին կապոյտ գոյնը
սպիտակին էր փոխել՝ ճնկներին ծածկւած էր:
Ոտքերին հազած ունէր մաշւած ու փոշոտ ոտ-
նամաններ՝ առանց գուլպաների: Զեռքին ու-
նէր ծառից կտրած մի ճիւղ իսկ ուսինց կա-
խած էր դինւորական պաշուսակը: Ակամայ
աչքի էին ընկնում նրա փոշոտ, երկար մո-
րուքը և բիղ-բիղ մազերով ծածկւած ծոժ-
րակը:

Քաղաքացիներից ոչ ոք այդ մարդուն չէր
ճանաչում. փոշոտ հագուստից և յողնած ու
խոնջատած դէմքից երևում էր՝ որ սա հեռա-
ւոր երկրից է գալիս: Քաղաքից դուրս նկա-
տել էին՝ թի ինչպէս նա կանգ էր առել ջրը
հորի մօտ ջուր խմելու. ըստ երևույթին՝ նա
սաստիկ ծարաւից այրւում էր, որովհետև
նրան հետևող փողոցային աղանբրը պատմում
էին որ ամեն մի քաջափոխում պատահող ջրը-
հորի մօտ անցւորականը նորից կանգ էր առ-
նում ջուր խմելու:

Փողոցի ծայրին հասնելով՝ նա դէպի ծախ
թեքուէց և մտաւ ոստիկանատունը՝ որտեղ
մնաց մօտաւորապէս մի քառորդ ժամ: Փողոց
դուրս գալով՝ նա պատահեց մի ոստիկանի՝ որին
խորը զլուխ տուէց: Ոստիկանը առանց պա-

տասխանելու նրա ողջունին՝ կասկածով սկսեց
դիտել անցւորականին:

Ոստիկանասանից օտարականն ուղղուէց
դէպի ամենքին յայտնի սրճատունը, որը միա-
ժամանակ և հիւրանոց էր և որի տէրը իր
բազմաթիւ յաճախորդների առանձին յարգանքն
էր վայելում: Ուղղակի խոհանոց մտնելով՝ օտա-
րականը մօտեցաւ հիւրանոցատիրոջը, սա շտա-
պով խորոված էր անում: Հարեան սենեակից
լսում էր յաճախորդների ձայները, որոնք սպա-
սում էին խորովածին:

Տեսնելով որ խոհանոցը մարդ մտաւ՝ հիւ-
րանոցատէրը, առանց դուրսը բարձրացնելու
հարցրեց. —

— Ի՞նչ էր հրամայում, սիրելիս:

— Մի քիչ ուտելու բան և քնելու տեղ
եմ ուզում, պատասխանեց օտարականը:

— Խնդրեմ, համեցէ՛ք: Ամեն ինչ կայ, ճաշ
է՛լ, քնելու տեղ է՛լ, անկողին է՛լ, — այն պայմա-
մանով իհարկէ՛ եթէ քո զրպանումդ էլ փող
կայ, աւելացրեց նա վերջը և չափեց անցւո-
րականին ոտքից մինչև զլուխը:

— Այդ բանի համար մի՛ անհանգստա-
նաք, ես փող ունեմ, պատասխանեց վերջինս և
պայուսակն ուսինց ցած առաւ, դրեց դռան մօտ
և փայտը ձեռքին նստեց ցածիլի աթոռի վրայ:

Այդ ժամանակ պանդոկատէրն աշխատում էր աչքի տակից մի լաւ քննել նոր չաճախորդին:

— ձաշը շո՛ւտ կը լինի պատրաստ, հարցրեց վերջինը:

— Ա՛յս բոպէիս:

Մինչդեռ օտարականը տաքանում էր վառարանի մօտ՝ պանդոկատէրը թղթի փոքրիկ կտորի վրայ մի քանի խօսք գրեց և ծառային հետ դուրս ուղարկեց: Ծառան վաղեց դէպի ոստիկանատունը:

— Իե՛ռ պատրաստ, չէ՞ քաշը, նորից հարցրեց օտարականը, որ բոլորովին չէր նկատել պանդոկատիրոջ արածը:

— Շուտո՞վ, այս բոպէիս պատրաստ կը լինի:

Մինքանի բոպէից՝ ծառան վերադարձաւ և բերեց թղթի պատասխանը: Պանդոկատէրը կարդաց, գլուխը շարժեց և մտածութեան մէջ ընկաւ, վերջապէս՝ նա վնասական կերպով մօտեցաւ անժանօթին, որը գլուխը քարշ զցած մտածմունքների մէջ էր խորասուզուել:

— Միրելիս, ես պէտք է ձեզ անհանգրստացնեմ, ասաց պանդոկատէրը քաշելով նրա ուսից, դիտէ՛ք... ես չեմ կարող ձեզ քնելու տեղ տալ:



— Ինչո՞ւ. կէս-երկիւղով, կէս-դարմանքով հարցրեց օտարականը: Երևի դուք վախճում էք, որ չե՞մ վճարի... Ապահով եղէք, եթէ ուզում էք՝ բոլոր ծախքերս սկզբից կը վճարեմ...

— Ո՛չ, բանը զրանում չէ՛:

— Հասպա ի՞նչ...

— Գիտէ՞ք... ես... տեղ չունիմ քնելու...

— Այդ ոչի՛նչ, ես նոյնիսկ ախոռում կը քնեմ եթէ սենեակներում տեղ չկայ, ասաց օտարականը և հանդրստուլթեամբ նստեց աթոռին:

— Այդ անկարելի է:

— Ինչո՞ւ է անկարելի:

— Որովհետեւ ախոռում էլ տեղ չկայ:

— Է՛հ, ոչինչ, շուտ արէք դեռ ճաշը բերէք, չետոյ դրա մասին կը մտածենք:

— Բայց ցաւը նրանումն է՝ որ ճաշ էլ չեմ կարող տալ ձեզ:

Այս խօսքերն օտարականին զարմացրին:

— Բայց չէ՞ որ ես սովից մեռնում եմ, բացականչեց նա և կրկին տեղից վեր կացաւ: Առաւօտից մինչև երեկոյ առանց մի բան ուտելու քայլել եմ, չէ՛, դուք այժմ պարտաւոր էք ինձ կերակրելու:

— Բայց ես ուտելու ոչինչ չունեմ, պատասխանեց պանդոկատէրը:

Օտարականը հեղնեց.—

— Ոչինչ չունէ՞ք, իսկ այս ի՞նչ է, հարցրեց նա և ձեռքով ցոյց տուեց խորովածը:

— Այդ ուրիշ հիւրերի համար է պատրաստած, չեմ կարող ձեզ տալ:

— Ո՞վքեր են հիւրերդ:

— Կառապանները:

— Քանի՞ հոգի են:

— Տասներկու:

— Իսկ այսքան բանը քսան մարդ էլ չին կարող ուտել:

— Բայց այդ բոլորն էլ արդէն զնուած են և փողը վճարած:

Անցւորականը նստեց տեղը և հանգստութեամբ ասաց.

— Ես սոված եմ, և դուք պարտաւոր էք ինձ կերակրելու. պանդոկն այդ նպատակով է շինուած:

— Սիրելի՛ս, աւելի լաւ է՝ առանց աղձուկի դուրս գնացէք. հանդարտ և կտրուկ կերպով ասաց պանդոկատէրը:

Վերջինիս այս վճռական խօսքերից օտարականը յնցեց:

— Աւելորդ է դատարկ տեղը խօսելը, բարեկամս, շարունակեց պանդոկատէրը, ես ձեզ նանաչեցի, դուք արքայական ժան-Վալ-

ժանն էք: Այստեղ ներս մտաք թէ չէ՝ ինձ կասկածաւոր թուացիք, ուղարկեցի ոստիկանատունը—այնտեղից բացատրութիւն ստացաչ ձեր մասին: Կարգալ զիտէ՞ք, անա՛ կարգացէք: Եւ նա տուեց ոստիկանատնից ստացած թուղթը:— Լաւ է, աղբէր, այստեղից փաստ-փոստդ-քաշի՛ր, դուրս գնա՛, ես չեմ ուզում քեզ հետ ոչ-մի դործ ունենալ:

Օտարականը դուրսը քարշ դրեց և պաշտակն առնելով՝ դուրս եկաւ:

Նանդարտ քայլերով, մտածմունքի մէջ ընկած, վիրաւորուած զգացմունքով նա առաջ էր գնում: Եթէ նա չեա նայէր՝ կը տեսնէր՝ որ պանդոկի դռանը կանգնել է նրա տէրը և իր շուրջը հաւաքուած մարդոց պատմում է տեղի ունեցածը: Երջապատողները լսում էին նրան անհանգստութեամբ:

Օտարականը կարծես մոռացաւ իր քաղցածութիւնը և երկար ժամանակ թափառում էր անձանօթ փողոցներում՝ մտածելով քիչ առաջ պատահած դէպքի մասին: Բայց այնուամենայնիւ՝ քաղցը նրան տանջում էր: Նա մտածեց մի այլ հաշարան գնալ: Երբ չըրջը նայեց և մի լուսաւորուած տուն տեսաւ—այդ հէնց հաշարան էր: Ներս մտաւ: Սեղանի մօտ նստած էին մի քանի հոգի: Ճրագի աղօտ լուսի

տակ նրանց դէմքերը հաղիւ էին նշմարուած: Կրակի վրայ մի պղնձով կերակուր էր եփուում, որը ճաշարանատէրը խառնում էր փայտի շերեփով:

— Ո՞վ է, հարցրեց ճաշարանատէրը, լըսելով օտարականի ոտնածայնը:

— Մի ձանապարհորդ, որ չօգնած է ու քաղցած:

— Համեցէք, համեցէք սիրելիս, այստեղ կարելի է և՛ հանգստանալ և՛ ընթրիք:

Օտարականը ներս մտաւ և կանգնեց սենեակի մէջտեղը: Մի կողմից նրա վրա ընկաւ նրազի աղօտ լոյսը, միւս կողմից՝ օջախինը: Մինչդեռ նա պաշուսակն էր հանում՝ սենեակի մարդիկ գիտում էին նրան:

— Համեցէք, կրակի մօտ տաքացէք մինչև ընթրիքը պատրաստ լինի, սասց ճաշարանատէրը:

Օտարականը նստեց և չօգնած ոտքերն ուղղեց դէպի կրակը: Նա սոված մարդու ագահութեամբ ներս էր շնչում ընթրիքի համեղ բուրմունքը: Նրա դէմքը բաւականաթիւն էր արտայայտում, բայց միևնոյն ժամանակ և ինչ որ թախծալից արտայայտութիւն ունէր: Երևում էր, որ նա շատ է տանջուել իր կեանքում:

Սենեակում նստած մարդկանց մէջ կար նաև մէկը՝ որ եղել էր պանդուկում և տեսել էր՝ թէ ի՞նչպէս պանդուկատէր օտարականին դուրս արեց: Իր մօտ կանչելով ճաշարանատէրոջ՝ նա ականջին փափսաց եղելութիւնը: Լսելով այդ պատմութիւնը ճաշարանատէրը մօտեցաւ օտարականին և կոպտութեամբ ասաց.

— Է՛յ, այստեղից դուրս կորիք:

— Հա՛... արդէն իմացել էք... թախծալից ձայնով և հեղութեամբ ասաց օտարականը շփոթուելով:

— Այո՛, հրամմել էք, իմացել եմ:

Օտարականը վերցրեց պաշուսակը, ձեռնափայտը և դուրս գնաց:

Երկար շրջելուց յետոյ՝ հասաւ բանտը և դուռը ծեծեց: Դուրս եկաւ պահապանը:

— Պարո՛ն պահապան, դարձաւ նրան օտարականը գլխարկը վերցնելով և խորը զլուխ տալով, թոյլ տուէք ինձ այս դիշեր բանտում անցկացնել:

— Բարեկամ, բանտը հիւրանոց չէ, այ՛, երբ որևէ յանցանքի համար ձեզ կը բերեն այստեղ—աչքիս վրա տեղ կունենաք, խօսեց պահապանը և դուռը վրա դարկեց:

Օտարականը վշտացած առաջ գնաց և հասաւ երկու կողմից ծառերով զարդարուած

մի փողոց: Գաղաքի այդ մասը շատ ուրախ
 ու դուրեկան տպաւորութիւն էր թողնում:
 Պատուհանները առաջից անցնելիս՝ Ժան-Վալ-
 ժանը ներս էր նայում: Նա կանգնեց մի փոքր
 տան առաջ: Պայծառ լուսաւորուած պատու-
 հանից երևում էր մի արձակ, դեղեցիկ սենեակ:
 Մի անկիւնում կախած էր օրօրոց, իսկ մէջ-
 աեղը գտնվում էր սպիտակ սփռոցով ծածկ-
 ւած սեղան: Սեղանի վրա դրած էր դիմու շիշ
 և կերակուր: Սենեակի կարասիքը լրացնում
 էին պատից կախւած հրացանը և մի քանի ա-
 թռուներ: Սեղանի մօտ նստած էր մօտ քառա-
 սուն տարեկան մի մարդ. նա դրկել էր երե-
 խին և խաղում էր նրա հետ: Դէմադէմը նստած
 էր նրա ջահել կինը որ ծիծ էր տալիս միւս
 երեխին: Նաչքը և մեծ երեսան ծիծաղում էին,
 իսկ մայրը երկուսին նայում և բաւականու-
 թեամբ ժպտում էր: Երևում էր որ ընտանի-
 քըն իրան բախտաւոր էր զգում:

Օտարականը մտածկոտութեամբ նայեց
 այդ երջանիկ մարդոց: Նրա մաքից անցաւ, որ
 այս ընտանիքը զոնէ կարելի է աւելի հիւրա-
 սէր լինի և մի փոքրիկ մխիթարաթիւն էլ է
 հասցնէ իրան: Եւ մի քանի բոպէ անվճռակա-
 նութեամբ կանգ առնելուց չետոյ՝ երկիւղով

պատուհանը ծեծեց: Այս անգամ ոչ ոք չը լսեց:
 Երկրորդ անգամ ծեծեց:

— Կարծես պատուհանը թրխկթրխկաց-
 նում են, տսաց կինը:

— Ձէ', ոչինչ չկայ, պատասխանեց ամու-
 սինը:

Ժան-Վալժանը երրորդ անգամ ծեծեց,
 աւելի բարձր: Ամուսինը տեղից վեր կացաւ,
 վերցրեց լամպը և դուռը բացեց:

— Ներեցէք, պարոն, որ ձեզ անհանգրս-
 տացրի, ասաց օտարականը: Սովից ու յոգնա-
 ծութիւնից մեռնում եմ: Արդեօք այնքան բարի
 չէք լինիլ որ մի աման կերակուր տաք և թող-
 նէք որ ձեր բակում քնեմ: Այդ բոլորի համար
 փող կը վճարեմ:

— Ո՞վ էք դուք, հարցրեց տանտէրը:

— Ես ճանապարհորդ եմ, ամբողջ օրը
 քայլել եմ առանց մի բան ուտելու: Ի՞նչ սէր
 Աստուծոյ մի՛ մերժէ՛ք:

— Ոչինչ, մի մարդու ընթրիք կարող եմ
 տալ, մանաւանդ՝ եթէ նա վճարէ, պատասխա-
 նեց տանտէրը: Բայց ինչի՞ ալտսեղի պանդոկը
 չէք գնում:

— Գնացի, տեղ չկար:

— Ձի կարող պատահել որ այսօր տեղ
 չը լինի, միայն տօն օրերն է պանդոկը լցւում:

— Այդ չդիտեմ, բայց պանդոկատներն ինձ
չնդունեց, շփոթեալ պատասխանեց օտարա-
կանը:

— Իսկ միւս նաշարանը չէ՞ք զնայել:

— Այնտեղ էլ մերժեցին:

Տանտէրն՝ այս լսելով՝ կասկածով սկսեց
դիտել օտարականին:

— Հա՛... հիմա քեզ ճանաչեցի թէ ո՞վ ես
դու, սիրելիս:

Եւ նա, առանց յետ դառնալու, առանց
աչքերը ժան-Վալժանից հեռացնելու, միքանի
քալլ յետ զնաց, լամպը դրեց սեղանին և պա-
տից վերցրեց հրացանը: Կինը շփոթուած ու
երկիւղով ամուսնուն էր նայում:

— Տէր Աստուած, սա անցն թափառա-
շրջիկն է...

Այս բոլոր այնպէս արագ կատարուեց որ
օտարականը գեո. ուշքը չէր հաւաքել որ կրկին
տանտէրը նրան մօտեցաւ այս անգամ արդէն
հրացանը ձեռքին և դռաց:

— Դուքս կորիւր այստեղից:

— Գոնէ մի քիչ ջուր տուէք բերանս թրը-
ջեմ, աղաչեց ժան-Վալժանը:

— Գնա կորիւր, թէ չէ զնդակահար կա-
նեմ, դարձեալ գոչեց տանտէրը: Եւ անկող հիւ-
րին դուրս գցելով՝ դուռը պինդ կողպեց:

Դուրսը համարեա բոլորովին մթնել էր.
լեռներից վիշուժ էր սառը քամին: Ժան-Վալ-
ժանը շուրջը նայեց և մթութեան մէջ խուղի
նման մի բան նկատեց, որ սեին էր տալիս ցան-
կապատի յետեից: Նա վճռեց քաղցածութեան
հետ հաշուել և միքիչ դոնէ հանդատանալ այդ
խուղի մէջ: Քիչ պառկելուց յետոյ՝ շարժեց,
ուղուժ էր պայուսակը հանել, զլսի տակ զնել,
բայց յանկարժ շան բռնոցը լսեց: Շուրջը նայե-
լով՝ տեսաւ մի սհապին դամբու, որին անհան-
դատացրել էր ինքը և որը պատրաստուժ էր
իր վրա չարձակել: Մի կերպ խուղից դուրս
գալով շան ձեռքից պրծաւ և փողոցը հասաւ:
Չարվաժ, քաղցած, ամեն կողմից հալածուժ՝
նա նստեց առաջին պատահած քարին և յու-
սահատութեամբ շնչաց:—

— Նոյնիսկ այն շնից անբախտ եմ...

Քիչ յետոյ՝ ուժերը հաւաքելով՝ դարձեալ
քալլեց. արդէն դիշեր էր դառնում: Ահա նա
հասաւ եկեղեցու հրապարակին, որի անկիւնում
մի քարէ նստարան տեսաւ և վճռեց գիշերն
այդտեղ անցկացնել:

Այդ ժամանակ եկեղեցուց մի պառաւ
դուրս եկաւ և նրա մօտից անցնելով՝ քայց-
րութեամբ հարցրեց:—

— Այստեղ ի՞նչ էք անում, բարեկամս:

— Ի՞նչ եմ անում... դառնութեամբ կրրկնեց ժան-Վալժանը: Զէք տեսնում որ ուզում էմ քնել:

— Այս քարի վրա, զարմացած հարցրեց պառաւը:

— Այո, այո, հէնց այս քարի վրա: Ես շատ էլ փափուկ չեմ սովորած, ամբողջ տասնինը տարի չոր տախտակի վրայ եմ քնել, իսկ այսօր կը փորձեմ քարի վրա քնել:

— Գու՞ք զինւոր էք:

— Այո:

— Ինչո՞ւ հիւրանոց չէք դնում:

— Փող չունենմ:

— Ո՞րքան կուղէի ձեզ օգնել, բայց միայն չորս կոպէկ ունիմ, ասաց պառաւը և տուեց նրան իր վերջին կոպէկները:

— Այս էլ կը հարկաւորուի, պատասխանեց անցւորականը և վերցրեց փողը:

— Այգիքանը ձեզ բաւական չի լինի հիւրանոցին վճարելու համար, իսկ փողոցում քրնելն անկարելի է: Երևի դուք մրսած ու քաղցած կը լինիք: Գուցէ կը դաժնուէին բարի ծարղիկ որ ձեզ հիւր ընդունէին:

— Շատ տեղ փորձեցի, բայց ամենքն էլ դուրս արին:

— Իսկ այնտեղ գնացի՞ք, հարցրեց պա-

ռաւը և ցոյց տուեց հրապարակի միւս ծայրին երևացող երկչարկանի տանը:

— Ո՞չ, այնտեղ չեմ գնացել:

— Դէ՛ գնացէ՛ք, անպատճառ կրնդունեն:



Բ Ս Ր Ի Ք Ա

Այդ քաղաքի քահանան եօթանասունհինգ տարեկան ամենքից չարգուած մի ծերունի էր: Միրիէլ քահանան, այդպէս էր նրա անունը: Նրա ամբողջ ընտանիքը երկու հոգուց էր բաղկացած—վաթսուհ տարեկան քոյրը և նոյն հասակի տնտեսուհին:

Երբ հայր Միրիէլը այս քաղաքին քահանայ նշանակուեց՝ հոգևոր վարչաթիւնից բնակարան էլ ստացաւ—բարէ մի մեծ, զեղեցիկ շինութիւն, որը պալատի էր նմանում, շատ սենեակներ ուներ և մի զեղեցիկ պարտէզ: Այդ շքեղ շինութիւնից ո՛չ հեռու, նոյն հրապարակի վրայ դաժնուած էր տեղական հիւանդանոցը, երկչարկանի մի փոքրիկ շինութիւն:

Միրիէլ քահանան, իր նոր պաշտօնատեղին զալու երբորդ օրը, այցելեց հիւանդա-

նոցը, երկար ծան եկաւ այնտեղ և ապա կան-
չեց իր մօտ հիւանդանոցի կառավարչին:

— Պարոն կառավարի՛չ, այժմ ձեզ մօտ
քանի հիւանդ կայ, հարցրեց նա, մտնելով իր
բնակարանի ամենամեծ և լուսաւոր սենեակը:

— Քսան և վեց, տէր-հայր:

— Ծիշտ է, ես էլ մօտաւորապէս այդ-
քան հաշուեցի:

— Տեղի փոքրութեան պատճառով մահ-
ճակալներն իրար շատ մօտ ենք դրել, աւե-
լացրեց կառավարիչը:

— Այո՛, ուղիղ է, ձեզ մօտ նեղուացք էր,
պատասխանեց քահանան:

— Սենեակները շատ ցածր են և խեղ-
դուած:

— Այդ ես էլ նկատեցի:

— Իսկ պարտէզն այնքան փոքր է՝ որ
առողջացող հիւանդներին դրօսնելու տեղ չկայ:

— Այդ էլ էք ուղիղ ասում, ես այդ էլ
նկատեցի:

— Վարակիչ հիւանդութիւնների ժամա-
նակ՝ շատ անգամ հիւանդների թիւը հարիւրի
է հասնում: Անցեալ տարի վարցաւը կար մեր
քաղաքում և ուղղակի չգիտէինք թէ ի՛նչ անենք:

— Այո՛, այո՛, այդ մեծ անչարմարու-
թիւն է:

— Էհ, ի՞նչ անենք, տէր-հայր, կամայ-
ակամայ այդ պայմանների հետ պէտք է հաշ-
տուենք:

— Իսկ ի՞նչ էք կարծում, քանի՞ մահճա-
կալ կը տեղաւորուի այս սենեակում, դիմեց
քահանան կառավարչին:

— Այստեղ... ձեր սեղանատանը, զար-
մացած հարցրեց կառավարիչը:

Քահանան շուրջն էր նայում և աչքով
չափում էր սենեակը:

— Հա՛, այստեղ պէտք է որ քսան մահ-
ճակալ տեղաւորուի, ասաց վերջապէս քահա-
նան: Ինձ թւում է, պարոն կառավարիչ, որ
այստեղ մի փոքր թիւրիմացութիւն է տեղի
ունեցել: Դուք քսանևվեց հոգի էք և սղմում
էք վեց փոքր սենեակում, մենք երեք հոգի ենք
և հարիւր մարդու տեղ ենք բռնել: Այս պէտք
է որ սխալմունքով եղած լինի, ես ձեր բնակա-
րանում եմ տեղ ստացել, իսկ դուք՝ իմի մէջ:
Շուտով դուք ձեր հիւանդների հետ փոխուե-
ցէք այստեղ, իսկ ես իմ պառաւների հետ կը
տեղափոխուեմ ձեր բնակարանը: Միւս օրն և
եթ քահանայի բնակարանը հիւանդանոց դար-
ձաւ, իսկ քահանան տեղաւորուեց նախկին հի-
ւանդանոցում:

Միրիէլ քահանան չետ ձգած փող չունէր,

բայց տարեկան երեք հազար ռուբլի եկամուտ էր ստանում: Սակայն՝ այդքան փողից միայն երեք հարիւր ռուբլի էր իր և իր ընտանիքի վրայ ծախսում. իսկ մնացեալը՝ զանազան միջոցներով ու ձեերով՝ նեղեալներին ու կարօտեալներին էր յատկացնում:

Նրա քոչոր միշտ և առանց հակառակելու հպատակում էր եղբօր վճիռներին: Խորը սիրելով եղբօրը՝ միաժամանակ և յարգում էր նրան որպէս իր դաստիարակին և ուսուցչին: Միայն պառաւ տնտեսուհին իրան թոյլ էր տալիս դժգոհութիւն յայտնել այդպիսի, ինչպէս ինքն էր ասում, չ՛ր տեսնուած անշահասիրութեան համար, և հազիւ էր կարողանում լրացնել տան անհրաժեշտ կարիքները, մի կերպ ծայրը ծայրին հասցնել:

Քահանայի միջոցները որքան էլ որ սուղ լինէին, աչնու ամենայնիւ՝ տան կառավարչուհիների խնայողութեան շնորհիւ միջոց ունէր իր հիւրերին որևէ պատիւ տալ:

Սեփական եկամուտների մեծ մասը կարօտիալներին բաժանելով՝ Միրիէլ քահանան մի աեսակ միջնորդի դեր էլ էր ստացել: Շուտով նա սկսեց նւիրատուութիւններ ստանալ: Թէ՛ կարողաւորները, թէ՛ չունեւորները հերթով ձեծում էին նրա դուռը. առաջինները՝ որ իրանց

նուէրները տան, իսկ միւսները՝ որ օգնութիւն խնդրեն: Մի տարի չանցած՝ նա արդէն յօժարակամ նուիրատուութիւնների պահապան ու տնօրինողն էր: Եւ չնայելով որ նրա ձեռքը մեծամեծ գումարներ էին անցնում՝ ոչ մի անգամ իրան թոյլ չէր տալիս աւելորդ ծախսեր անել և միշտ քչով բաւականանում էր: Բայց քանի որ քաղցածներն առհասարակ միշտ աւելի շատ են լինում, քան թէ նրանց օգնել ցանկացողները՝ ուստի և աէր-հօր գանձարանը շատ յանախ դատարկ էր լինում և այդպիսի դէպքերում նա ստիպուած էր իրան աւելի ևս զրկել, որպէս զի օգնէ կարօտեալներին: Սակայն՝ Միրիէլ քահանան այդքանով միայն չէր բաւականանում: Նա յաճախ ճանապարհորդութիւններ էր անում շրջակայ զիւղերն ու քաղաքները՝ քարոզներ ասելու և իր եղբայրներին հոգեպէս մխիթարելու: Պէտք է ասել՝ որ լեռնոտ երկրում շրջելը ճանապարհների վատութեան պատճառով հեշտ բան չէր: Մերուների քահանան մօտիկ սեղեր ոտքով էր գնում, իսկ հեռու տեղերը՝ սալով կամ ջորիով: Մի անգամ օրինակ՝ դէպքն այնպէս բերեց որ նա սալ չգտաւ և իր այցելութիւնն էլ չտաճօղել չը կամենալով՝ իշով գնաց հարևան գիւղը: Երբ հասաւ այնտեղ՝ շատերն սկսեցին ծիծաղել

քահանայի վրա: Հայր Միրիէլն այդ նկատեց.

— Ես տեսնում եմ, եղբայրներս, որ դուք ինձ մեղաւորում էք աններելի հպարտութեանս համար, որ ես, մի հասարակ քահանաս, ձեզ մօտ եմ եկել այն կենդանու վրա նստած՝ որով միտունն էր ճանապարհորդում: Բայց հաւատացնում եմ ձեզ որ ես այդ բանը ստիպւած եմ արել:

Նրա քարոզները շատ հասարակ ու պարզ էին, և աւելի շատ զրօյցների էին նման: Քարոզների ժամանակ նա միշտ առօրեայ կեանքից էր օրինակներ վերցնում և ամենքին հասկանալի ու մատչելի խրատներ տալիս:

Գ.

Ը Ն Տ Ա. Ն Ե Կ Ա. Ն Կ Ե Ա. Ն Ք Լ:

Հայր Միրիէլի ընտանեկան կեանքն այնքան կանոնաւոր ու մաքուր էր՝ որ ամեն մի ծխականի համար իբրև օրինակ կարող էր ծառայել: Ով նրան ճանաչում էր, ակամայ յարգանք էր տածում դէպի այդ մարդը, որ իր բարի կամքով այնքան զրկողութիւններ էր յանձն առնում մերձաւորներին օգնելու համար:

Իր բոլոր ազատ ժամանակը հայր Միրի-

էլը հիւանդներին ու տնանկներին էր յատկացնում, կամ իր պարտիզում աշխատում էր կամ մտաւոր աշխատանքով էր զբաղւում, որը նույնպէս «այդեգործութիւն» էր անուանում— «Մարդու խելքն էլ պէտք է մշակուի՝ ինչպէս այգին» ասում էր նա:

Իր առաւօտեան զբաղմունքները վերջացնելուց յետոյ նա դիմում էր չքաւորների խրոհիթները— ամեն տեղ իր հետ մտցնելով մխիթարութիւն և օգնութիւն: Թէ՛ ձեր, թէ՛ մանուկ ուրախանում էին նրա դալստեանը՝ ինչպէս փայլուն արևի կենդանարար ճառագայթներին:

Չբաւորներին այցելութիւններ անելով՝ նա չէր մոռանում նաև հարուստներին որոնցից շարունակ օգնութիւն էր ստանում կարօտեալներին բաժանելու:

Այցելութիւնները վերջացնելուց յետոյ՝ նա տուն էր դառնում ճաշելու: Ճաշը խիստ համեստ էր— մի բաժակ կաթ և հաց— ամբողջն ահա այդ էր: Ընթրիքը բազկացած էր կանաչեղէնից ու սպասից: Եւ միայն այն ժամանակ՝ երբ հիւրեր էր ունենում՝ թոյլ էր տալիս մսեղէն կերակուր պատրաստելու՝ որպէս յարգանքի նշան դէպի հիւրը: Ընթրիքից յետոյ քիչ զրօյց էր անում պառաւների հետ և

ապա քաշուում էր իր սենեակը՝ ընթերցանութեամբ պարապելու:

Դ

Ո՞վ է ՔԱՀԱՆԱՅԻ ՏՍՆ ՊԱՀԱՊԱՆԸ.

Հայր Միրիէլի բնակարանը վեց սենեակից էր բաղկացած. երեքում պառաւաններն էին ապրում, մնացած երեքում՝ ինքը քահանան: Մէկը նրա ննջարանն էր, միւսը՝ սեղանատունը և երրորդը՝ հիւրասենեակը: Բնակարանի կարասիքն էլ պարզ էր:— Սեղանատանը զրած էր հաստարակ փայտէ մի սեղան, շինած չորս աթոռ և ներկած փայտէ մի հին պահարան: Միւս սենեակներն էլ նոյն տեսակ էին կահաւորուած: Հայր Միրիէլը բնակարանը զարդարելու մասին ամենևին չէր մտածում, և երբ գէպք էր գալիս մի քանի հիւրեր ունենալու՝ նստելու տեղ չէր լինում: Սակայն՝ պէտք է չիշել՝ որ մի աչքի ընկնող զարդ կար նրա բնակարանում.— այդ՝ մաքրութիւնն էր— «մաքուր լինելովս՝ չքաւորներին ոչնչից չեմ զրկիլ» ասում էր քահանան:

Հայր Միրիէլի կարողութիւնը հաշուելիս՝ պէտք է աւելացնենք՝ որ նա դեռ ևս պահել

էր հնուց մնացած արծաթեայ ամանները, որոնք՝ աւելորդ չի լինիլ չիշելը՝ պառաւ սնտեսուհու պարծանքի առարկաներն էին: Իրանց թուումն էին նաև երկու արծաթէ հին մոմկալներ՝ նոյնպէս պապերից մնացած: Այս մոմկալները հիւրանոցումն էին պահուում և գործ էին ածուում միայն հիւրեր եղած ժամանակ:

Հայր Միրիէլի տան դուռը միշտ բաց էր և ոչ մի ժամանակ չէր կողպուում: Սկզբում պառաւաները վախենում էին և պնդում էին՝ որ զոնէ զիշերները պէտք է կողպել, բայց հայր Միրիէլն այդ աւելորդ համարեց և վերջ ի վերջոյ պառաւաններն էլ հաշտուեցին այդ մտքին: Այդ առթիւ ձերունի քահանան ասում էր. «Բժշկի և քահանայի բնակարաններն իրարից այն բանով են տարբերում՝ որ բժշկի բնակարանը երբէք չպէտք է կողպած լինի, իսկ քահանայինը՝ միշտ պէտք է բաց լինի»: «Ձեզնից հիւրնկալութիւն հայցողի անուներ մի հարցնէք, ասում էր հայր Միրիէլը, որոհեաւ հիւրնկալութեան կարիք ունեցողն ամենքից քիչ է ցանկանում իր անուներ յայտնել»:

Ե

ՀԱՅՐ ՄԻՐԻԷՂԸ ԵՒ Ա.Ի.Ա.ՉԱ.ԿՆԵՐԸ:

Այստեղ մի փոքրիկ դէպք պատմենք՝ որն աւելի լաւ ցոյց կրտայ՝ թէ ի՞նչ մարդ էր հայր Միրիէլը: Այդ ժամանակները մի չայտնի չարագործ կար, որը աւազակութիւններով ու սպանութիւններով ամբողջ երկիրը սարսափի մէջ էր ձգել: Մի անգամ նա իր ընկերների հետ մտաւ եկեղեցին և բոլոր թանկագին իրերը թալանեց: Ամենքը ահ ու դողի մէջ էին և իրանց տներից դուրս չէին գալիս: Այդ ժամանակ հայր Միրիէլն ուզեց այցելութեան գնալ լեռնային հովտական մի գիւղ, որը քահանայ չունէր: Ոստիկանապետը նրան զգուշացրեց որ չը գնայ, հակառակ դէպքում՝ աւազակները կը սպանեն թէ՛ իրան, թէ՛ ուղեկիցներին:

— Եթէ ձեր ասածն ուղիղն է՝ պատասխանեց հայր Միրիէլը՝ ես առանց ուղեկիցների կը գնամ:

— Ո՛չ, դուք այդպիսի անմիտ քալ չը պէտքէ անէք, գոչեց ոստիկանապետը:

— Ես այստեղ ոչ մի անմտութիւն կամ անզգուշութիւն չեմ տեսնում, պատասխանեց

քահանան. ես մահիցս չեմ վախենում, հետեապէս և մենակ կը գնամ:

— Մենակ:

— Այո՛, մենակ:

— 'Ի սէր Աստուծոյ, չե՛տ կացէք այդ վտանգաւոր վերուից կրկնեց ոստիկանապետը:

— Բայց վերջապէս հասկացէ՛ք, պարոն ոստիկանապետ, որ ես չեմ կարող առանց այցելութեան թողնել այն խաղաղ ու աստուածասէր հովիւներին: Նրանց շուտ-շուտ պէտք է չիշեցնել Աստուծոյ խօսքը: Եթէ ես էլ նրանց մոռանամ՝ ի՞նչ կասեն: Ի՞նչ կասեն՝ եթէ իմանան որ չեմ գնացել նրանց մօտ ինչ որ մի չիմար բանից երկիւղ կրելով:

— Բայց չէ՞ որ կարող էք աւազակներին պատահել:

— Աւելի՛ լաւ, աւելորդ չի լինիլ եթէ ժամանակ-առ-ժամանակ նրանք էլ լսեն Աստուծոյ խօսքերը:

— Բայց նրանք խիստ անզութ չարագործներ են, կատաղած գալլեր են...

— Այդ դէպքում՝ աւելի ևս հարկաւոր է նրանց Աստուծոյ խօսքը քարոզել:

— Բայց միթէ չէ՞ք վախենում որ նրանք ձեզ էլ կողոպտեն:

— Կր կողոպտե՞ն.— Ինչքոս պէտք է կողոպտեն:

— Եթէ կողոպտելու ոչինչ չունէք՝ կր սպանեն:

— Ինձ պէս մի անվնաս մարդ ինչո՞ւ պէտք է սպանեն. ես խաղաղութեամբ իմ ճանապարհը կր զնամ:

— Բայց ասենք թէ պատահեցիք նրանց, ի՞նչ պէտք է անէք:

— Եթէ պատահիմ՝ աւելի լաւ, կր խրնդրեմ որ չքաւորների համար մի բան էլ նրանք նուիրին: Իսկ զուցէ կր յաշողուի թէկուզ մի կորած հողի ևս փրկել:

— 'Ի սէր Աստուծոյ, լսեցէ՛ք ինձ, խրնդրում էր ոստիկանապետը, պահպանեցէք ձեր կեանքը, տուն զարձէք:

— Յիշեցէ՛ք, բարեկամս, պատասխանեց հայր Միրիէլը, որ ամեն մարդու նպատակը պէտք է լինի ո՛չ թէ պահպանել իր կեանքը, այլ զոհել նրան իր մերձաւորների համար:

Այսպէս խօսելով՝ հայր Միրիէլը ճանապարհ ընկաւ:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՐԱՆԸ:

Այն երեկոյեան, որից սկսեցինք մեր պատմութիւնը, հայր Միրիէլը նստած՝ սեղանատանը կարդում էր: Սեղանը պատրաստելիս՝ անսեսուհին նկատեց, որ այս գիշեր պէտք է դուռը կողպել, որովհետեւ ինքը փողոցում լըսել էր, որ քաղաքում մի թափառաշրջիկ է յայտնուել, որից ամենքը վախենում են:

— Ձեզ անհանգստացնում է այդ թափառաշրջիկը, հարցրեց հայր Միրիէլը:

Ճնտեսուհին տաքացած պատմեց այն բոլորը, որ մենք գիտենք ժան-Վալժանի մասին, այսինքն՝ որ մի ոտաբոբիկ թափառաշրջիկ է եկել քաղաքը, որ նա շատ կասկածելի մի անձնաւորութիւն է, զնացել է սրճարան, ճաշարան, մասնաւոր տներ, բայց ամենքը դուրս են արել, վախենալով, որ գիշերը կրկողոպտէ կամ սպանութիւն կ'որոժէ, որ նա ամբողջ օրը թրեւ է զալիս փողոցներում, որ նորանից ամենքը սարսափում են, այնպէս չար դէմք ունի...

Դեռ պառաւն իւր խօսքերը չէր վերջացրել, որ դուռը ձեծեցին:

— Համեցէք, ձայն տուեց քահանան, ներս եկէք: Իսկոյն դուռը բացուեց և ներս մտաւ հենց այն սարսափելի թափառաշրջիկը, որի մասին խօսում էր տնտեսուհին: Այդ ժան-Վալ-ժանն էր, անտուն աքսորեալը, ամենքից արհամարհուածը: Յոգնածութիւնից և սովից նա բոլորովին թուլացել և ուժասպառ էր եղել, աչքերը տենդաչին կերպով փայլում էին:

Տնտեսուհին այնպէս վախեցաւ, որ լեզուն կապ ընկաւ: Միւս պառաւը, հայր Միրիէլի քոյրը, նոյնպէս սաստիկ վախեցաւ, բայց երբ տեսաւ եղբօր խաղաղ դէմքը՝ հանգստացաւ:

Հայր Միրիէլը սիրալիւր հայեացքով նայում էր անկոչ հիւրին և արդէն ուզում էր հարցնել նրա այցելութեան պատճառը, երբ անձանօթն ինքը բարձր ձայնով ասաց:

— Դուք երեւի ուզում էք հալցնել իմ ո՞վ լինելը: Ես աքսորական ժան-Վալ-ժանն եմ, որ տասնեւինն տարի աքսորի մէջ էի: Այժմ ինձ արձակել են և ես տուն եմ գնում: Այսօր չիսուն վերստ տարածութիւն եմ անցել: Ձարշուած եմ և քաղցած. մտայ այստեղի պանիւղը, նաշարանը, բայց ամեն տեղից ինձ դորս արին, որովհետև ամենքն էլ ոստիկանատնից իմացան, որ ես նոր արձակւած աքսորական

եմ: Չգիտեմ, այժմ ո՞ւր գնամ, ո՞ւմ դիմեմ: Գնացի նոյն իսկ բանտը, բայց այնտեղից էլ դուրս արին: Ամեն տեղ ինձնից փախչում են, կարծես, ժանտախտ լինեմ: Վերջապէս շան բունը մտայ—այնտեղից էլ շունը դուրս բշեց: Ես այստեղից քիչ հեռու քարէնօտարանի վրայ վեր ընկայ ուզում էի քնել, բայց մի պառաւ ասաց, որ ձեզ մօտ զամ. սա պանդո՞կ է, ի՞նչ է: Մի՛ վախենաք, փող ունեմ, կ'վճարեմ ամբողջը, չիսուն ուրբի ունեմ, որ աշխատել եմ աքսորատեղումս: Ընթրիքիս գինն էլ կարող եմ վճարել, սենեակի վարձն էլ: Տ՞ր, ի՞նչ էք ասում, ներս պէտք է թողնէք, թէ չէ:

— Գոյրիկ, մի աթոռ բերէք, դարձաւ հայր Միրիէլը քրոջը:

Անցւորականը մի քայլ առաջ եկաւ և կարծես ականջներին չ'հաւատալով, աւելացրեց:

— Կարելի է չ'լսեցի՞ք որ ես աքսորական եմ, ես ձեզ ուղիղն ասացի, ահա անցադիրս:

Եւ զրպանից մի մեծ դեղին թուղթ հանելով՝ տուեց ծերունի քահանային:

— Տեսնում էք այս դեղին թուղթը. սա իմ անցադիրս է. բաւական է որ մի տեղ սրա ծայրը տեսնեն—և իսկոյն վզակոթիս

տալով դուրս կը դցեն: Ահա՛, կարդացէք, տեսէք, ի՞նչ է զրած.— Կացէք՝ ես կարդամ.— «Այս ներկայացնողը ժան-Վալթանն է, բ... քաղաքի բնակիչ, 19 տարի եղել է արքայութեան, հինգ տարի դուռը կոտորելու և գողութիւն անելու համար, 14 տարի 4 անգամ արքայազնի փախչելու փորձ անելու համար: Սա խիստ երկիրալի մարդ է» — Իէ՛ այժմ գիտէք, թէ ի՞նչ տեսակ մարդու հետ զործ ունէք: Կրրկնում եմ, որ ամեն տեղից ինձ դուրս են դցել: Միթէ դուք կարո՞ղ էք ինձ ներս ընդունել, կերակրել և թոյլ տալ որ գոնէ ախոռում քնեմ:

— Քոյրիկ, հիւրասենեակում անկողին պատրաստէք, չժողանաք մաքուր սպիտակեղէն փռել, նորից գիծեց քահանան տնտեսուհուն:

— Նստեցէք այստեղ, պարոն Վալթան, վառարանի մօտ տաքացէք, ասաց ծերունին դիմելով հիւրին: Մենք այս բոպէիս կ'ընթերենք, մինչև ձեր անկողինը կ'պատրաստեն:

Այս խօսքերից յետոյ միայն անցւորականը հաւատաց որ իրան իսկապէս թոյլ են տալիս մնալու: Նրա մօռլը, խորշոմած գէմքի վրայ երևաց կասկածի, անհանգստութեան, ուրախութեան և աննկարագրելի յոգմունքի ար-

տայայտութիւններ, և նա ցնորուածի պէս անկապ-անկապ խօսեց:

— Ի՞նչ, միթէ ինձ թոյլ էք տալիս մնալու ձեզ մօտ: Միթէ դուրս չէք դցում: Ախար ես արքայական եմ, ամենքն ինձ հալածում են, ինչպէս հալածում են կատաղած շանը, իսկ դուք ինձ հետ այդպէս քաղաքավարի էք խօսում, «պարոն Վալթան» էք ասում: Ես կարծում էի՝ թէ դուք էլ ուրիշների պէս դուրս կանէք ինձ, այնինչ...— Բայց երևի դուք ուղիղ որ շատ լաւ մարդ էք: Ի՞նչ, ասենք, վերջը չէք զղջալ այս բարեգործութեան համար, ես ամբողջովին կ'վճարեմ արժէքը: Ծնորհակալ եմ, պարոն պանդոկապետ, դուք լաւ մարդ էք, և ես էլ առուտուր չեմ անի, ինչ որ ուղէք՝ այն էլ կ'տամ: Տա՛, մոռացայ հարցնել. ձեր անունը ի՞նչ է, պարոն պանդոկապետ:

— Ես պանդոկապետ չեմ, ես այստեղի քահանան եմ, պատասխանեց հայր Միրիէլը:

— Քահանան էք, երևի հրապարակի վրա որ կայ՝ այն եկիղեցու քահանան էք. այդ ես ի՞նչպէս չճանաչեցի ձեր հագուստից, ի՞նչ լաւ կ'լինէր, եթէ բոլոր մարդիկ ձեզ նման լինէին:...

Այսպիսի խօսքերով՝ անցւորը հանում էր պայուսակր: Անցագիրը դրեց զրպանը և

նստեց վառարանի մօտ, առաջարկուած տեղը:

— Ձեզ նման մարդ շատ բիւզ կայ աշխարհում, տէր հայր, շարունակեց նա, և ես աեսնում եմ, որ դուք ոչ մի մարդուց չէք զգուած: Ուրեմն ինձնից փող չէք վերցնելու:

— Ոչ, ինձ ոչ ինչ հարկաւոր չէ, պատասխանեց ծերունին, փողը ձեզ հարկաւոր կ'զայ: Որքան է, մոռացայ:

— Յիսուն ուրբի:

— Իսկ ինչքան ժամանակում էք աշխատել այդ փողը:

— Տասնեկէս տարում:

Քահանան նայեց անցւորականին և հողոց քաշեց:

— Բոլոր փողերս մօտս են, ոչինչ չեմ ծախսել: Ծանապարհին 25 կ. ծախսեցի, այն էլ մի կայարանում բեռնակրութիւն արի—աշխատեցի: Հա՛ մոռացայ ասել, որ մեր արսուրատեղում էլ կար մի քահանայ, նոյնիսկ մի անգամ մի եպիսկոպոս եկաւ, զլիսին մի փայլուն զգակ ունէր:

Մինչ դեռ Փան-Վալթանը այդպէս խօսում էր, անտեսուհին բերեց նրա համար ամաններ, զրեց սեղանին. Մերունի քահանան գարձաւ նրան:

— Քոյրիկ, այս լամպը լաւ չէ լոյս տալիս:

Տեսեսուհին հասկացաւ ակնարկը և նրնշարանից դուրս բերեց արծաթեայ մոմկալները՝ վառած մոմերով:

— Դուք այնքան բարի էք, տեր-հայր, շարունակեց անցւորականը, որ նոյն իսկ չեմ կարող ասել թէ այս բոսկէիս ի՛նչ եմ զգում: Դուք ոչ միայն չ'արհամարհեցիք ինձ, այլ և ձեր սեղանի մօտ նստեցրիք ընթրելու և այդքանը բաւական չէր, որպէս հիւրի՝ մոմ էլ վառեցիք սենեակը լուսաւորելու, այն ինչ ես ձեզ պատմեցի, թէ ի՛նչպիսի սարսափելի տեղից եմ դուրս եկել:

— Դուք այդ բոլորը կարող էիք չ'պատմել, վրա բերեց քահանան, քաղցրութեամբ բռնելով նրա թևը.— այս տան տէրը ես չեմ, այլ մեր բոլորիս Տէր Յիսուսը, և սրա դուռը բաց է ո՛չ թէ նրանց համար՝ ով որ լաւ անուն ունի, այլ նրանց համար՝ ով ցաւ ունի, զժբախտ է: Դուք տանջուած էք, չողնած ու սոված էք, ուրեմն իրաւունք ունէք այստեղ հանգստանալու, որքան ուզում էք, և լաւ չի՛շեցէք որ դուք այստեղ հիւր չէք, այլ ձեր սեփական ասնն էք, և ինձնից ոչ մի բանի համար շնորհակալ մի լինիք: Բոլոր ամանկներն ու

խեղճերը կատարեալ իրաւունք ունեն այստեղ
իջևանելու և օգտուելու այն ամենից, որ կա
այստեղ: Ուրեմն էլ ինչօր է պէտք ձեր ա-
նունը, քանի որ ես գիտեմ, թէ ի՛նչ մարդ էք
դուք:

— Ուրեմն դուք գիտէի՞ք իմ անունը,
դարձացած հարցրեց ժան-Վլաժանը:

— Այո՛, գիտէի, ամենից առաջ՝ դուք իմ
եղբայրն էք:

— Ճշմարիտ որ, տէր-հայր, ես առաջին
անգամն եմ տեսնում այդպիսի մի մարդ, և
երբ դուք խօսում էք, ինչ որ զարմանալի բան
եմ զգում ես, բայց չեմ հասկանում, թէ ի՛նչ...
Երբ ներս եկա՛յ այստեղ՝ սաստիկ չոչնած ու
սոված էի, իսկ այժմ ամեն ինչ մոռացել եմ:

— Երևի դուք շատ դժբախտ էք եղել,
ասաց քահանան խղճահարութեամբ:

— Օհ, ես նոյն իսկ ձեզ պատմել չեմ
կարող, թէ որքան եմ տանջուել, պատասխա-
նեց ժան-Վլաժանը, ցնցուելով իւր անցած
կէտների չիշողութիւններից:

— Այո՛, ճիշտ է, ձեզ շատ ծանր խաչ է
վիճակուել, մտածելով ասաց Միրիելը: Բայց
մտաբերեցէք Փրկչի ասածը:— «Ասում եմ ձեզ,
որ այնտեղ, երկնքում աւելի կուրախանան մի
մեղանչողի համար, որք զղջացել է, քան 99

արդարների համար, որոնք զղջալու կարիք
չունեն:» Եթէ դուք մեղադրում էք նախա-
խնամութիւնը և չէք կարողանում ներել մար-
դոց ձեզ հասցրած չարիքների համար՝ ճշմա-
րիտ՝ որ խղճահարութեան արժանի էք, իսկ եթէ
դուք համբերութեամբ կրել էք ձեզ ուղարկած
փորձութիւնը և դարձեալ սիրում էք ձեր եղ-
բայրներին՝ նրանց բարի էք կամենում, այդ
դէպքում դուք մեղանից շատ շատերից լաւ էք:

Ընթրիքը պատրաստ էր, թէև հասա-
րակ,—սպաս, հաց ու պանիր:

— Ուտենք ինչ որ Աստուած տուել է,
ասաց քահանան և հիւրին նստեցրեց իւր կող-
քին:

Հիւրը ազահութեամբ վրա ընկաւ ընթ-
րիքին:

Ընթրիքը վերջացնելուց չետոյ քահանան
մի մոմկալը ինքը վերցրեց, միւսը տուեց
հիւրին և բարի գիշեր մաղթելով՝ զնաց իր
ննչարանը:

— Բարի բիշեր, ասաց նա անցւորակա-
նին, առաւօտը ձեզ կաթ ու հաց կ'տան, իսկ
այժմ հանգիստ քնեցէք:

Մենակ մնալով՝ հիւրը առանց շորերը
հանելու, չոզնածութիւնից վեր ընկաւ անկող-

նի վրա, և մի րօպէ չ'անցած մեռածի նման
քնեց:

է

Ո՞վ էր ժԱՆ-ՎԱԼԺԱՆԸ:

Աքսորից նոր վերադարձած ժան-Վալ-
ժանը ծնուել էր չքաւոր զիւղական ընտանի-
քում և երեսայուլթիւնից որբ էր մնացել:
Մայրը ծննդկանուլթիւնից էր վախճանուել:
Որբ երեխան ոչ մի ազգական չուէր՝ բացի
ամուսնացած քրոջից՝ որը նրան վերցրեց իր
մօտ պահելու և խնամեց մինչև իր ամուսնու-
մահը: Ամուսնու մահից յետոյ քոյրը 7 ման-
րահասակ երեխաների հետ ընկաւ վերջին ծայր
կարիքի մէջ: Այդ ժամանակ արդէն ժան-Վալ-
ժանը հասակն առել էր և սկսեց իր աշխա-
տանքով պահել քրոջն ու նրա որբերին: Նա
առանց հանգստանալու առաւօտից մինչև ե-
րեկոյ աշխատում էր, որպէս զի կարողանայ պա-
հել քրոջ ընտանիքը:

Նա օրական աշխատանքի համար ստա-
նում էր 30 կ., որը հազիւ էր բաւականանում
մեծ ընտանիքին, ոչ մի աշխատանքից չէր խու-
սափում, որքան էլ ծանր լինէր, միայն թի:

երեխաները սոված չ'մնային: Իր անձնական
բաւականուլթիւնների մասին նա ամենեւին չէր
էլ մտածում, ամբողջ հոգսն էր—պարտքը կա-
տարել:

Մի անգամ ժան-Վալժանը, ծմբան մէջ
տեղը, ոչ մի աշխատանք չ'կարողացաւ գրա-
նել *) և ամբողջ ընտանիքը առանց մի կտոր
հացի մնաց:

Մի երեկոյ հացթուխ Մօբերը, քնելուց
առաջ ինչ որ թրբիսկոց լսեց: Նայելով դէպի
փռան կողմը՝ տեսաւ որ պատուհանի կտարած
ապակու անցքից մի ձեռք երկարացաւ, բռնեց
առաջին պատահած հացը և անհետացաւ:
Հացթուխը փողոց վազեց, բռնեց փաղչոյ դո-
ղին, որի ձեռքը ապակու կտորներից արիւ-
նոտել էր և արիւնը գողուլթեան ապացոյցնե-
րից զլխաւորը եղաւ:

Այդ գողը ժան-Վալժանն էր:

Ժան-Վալժանին իսկոյն բանտարկեցին,
դատի ենթարկեցին և հինգ տարի աքսոր
վճռեցին: Ազնիւ աշխատաւորը զլուխը կորց-
րել էր և չէր հասկանում իւր հետ պատա-
հածը:

*) Տես բժ. Բուդուզեանի «Ո՞վ է յանձաւորը» և «Կա-
րել և բարեգործուլթիւն» գրքոյկները:

Ուրիշ արտորականների հետ 27 օր նա ստանալու զնալուց չետոյ՝ նա հասաւ արտորակ տեղին, որտեղ նրա անունը փոխեցին և զրի Ն՝ 24601-երորդը: Առաջուանից ոչ ծի բազմնաց, սկսած հազուստից մինչև սեփական անունը:

Իսկ թէ ի՞նչ եղաւ իր բոլոր երեխաներով, նա ոչինչ չիմացաւ: Մի անգամ լուր հասաւ նրա ականջին, որ քրոջը տեսել են կաղմարարի ծօտ աշխատելիս, իսկ երեխաները չայտնի չէր, թէ որտեղէին:

Ահա այդքան դիտէր ժան-Վալտանը սիրելիների ծասին:

Աքտորի 4-բորդ տարին նա փորց արեփախելու, բայց բռնուեց և դարձեալ 5 տարեկանակիր աշխատանքի դատապարտուեց: Երկրորդ և երրորդ փորձն արեց և դարձեալ 10 տարի աւելացաւ: Այդպէս ահա 19 տարի մնալուց չետոյ՝ նա արձակուեց և ինչպէս ձեզ արդէն չայտնի է, ճանապարհ ընկաւ դէպի հայրենիքը:

Ը

ԵՔՍՈՐԱՏԵՂՈՒՄ ՍՈՎՈՐԱԾ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ:

Գեռ նոր էր անցել զիշերուայ ժամի 2-ը, ժան-Վալտանը դարթնեց: Նա դարթնեց սոյն պատճառով՝ որ երկար ժամանակ սովորած լինելով ամեն տեսակ անյարմարութիւններէ՝ չկարողացաւ փափուկ անկողնում երկար ընել:

Նորից ուզեց աչքերը փակել—կրկին քրտնել, բայց չչաշողուեց: Գլխում պտրտում էին պատկերներ խառն, կցկտուր չիշողութիւններ անյեալից և ներկայից:...

Բայց այդ չիշողութիւնների հետ ժամանակ-առ-ժամանակ միտքն էին դալիս բահալայի ննջարանում պահուած արծաթեայ ամանները:

Այդ միտքը վերջ ի վերջոյ նրան սկսեց այնպէս հալածել որ նրան թւում էր, թէ բոլոր արծաթեղէնները իր աչքի առաջ են: Միաժամանակ նա մտածում էր որ նրանք հին, մաքուր արծաթից են շինած, և եթէ ծախուեն՝ հարիւր ոսկւի զին կրկտրեն, այսինքն երկու անգամ աւելի շատ քան ինքը կարողացել էր

աշխատել ամբողջ 19 երկար ու ձիգ տարիներ
րի ընթացքում:

Նրա մէջ առաջ եկաւ մի ներքին կռիւ,
չդիտէր, ի՞նչ անէր: Ժամացոյցը զարկեց ժամը
երեքը: Նա մեքենայաբար անկողնում նստեց,
ծեռքը երկարացրեց դէպի պաշուսակը, որը
մահճակալի մօտ էր դրած: Ապա ոտնաման-
ները հագաւ և նորից մտածմունքի մէջ ըն-
կաւ: Կարելի է այդ դրուժեան մէջ մինչև
լոյս էլ նստէր, եթէ դարձեալ ժամացոյցի
ձայնը չ'լսէր: Կարծես այդ ձայնը նորան ա-
սայ՝ «դէ՛, գործի կանգնելու ժամանակն է:»

Նա անվճռականութեամբ ոտքի կանգնեց
և սկսեց ականջ գնել: Համոզուելով որ բոլոր
տանեցիք խորը քնած են, մատների վրայ մի
քանի քայլ արեց և պատուհանից դուրս նա-
ջեց. Լուսնեակ դիշեր էր. ամպերը վազում էին
երկնքի երեսին. նա մտածեց պատուհանը բա-
նալ, բայց օդի սառնութիւնը զգալով, իսկոյն
փակեց:

Մի քանի րոպէ ևս կանգնելով պատուհանի
մօտ և նկատելով, որ պարտէղի ցանկապատը
շատ ցածր է, այնպէս որ հեշտութեամբ կա-
րելի է թռչել նրա վրայից, Ժան-Վալթանը
վճռական կերպով դարձաւ մահճակալի մօտ,
վերջրեց իւր պաշուսակը, նրա՝ միշտից ինչ որ

մի երկաթի կտոր հանեց, որը աքսորեալները
գործ էին զնում հանքերը քանդելու համար:
Վերցնելով այդ երկաթը, Ժան-Վալթանը
հասաւ հարեան սենեակը, որտեղ քնած էր
քահանան: Դուռը կիսաբաց էր: Աքսորականը
նրան կամայուկ հրեց, բայց սա այնքան
չբացուեց, որ կարելի լինէր ներս մտնել: Երկ-
րորդ անգամ հրեց դուռը.—այս անգամ նրո-
նոց լսուեց, բայց քահանան չ'զարթնեց: Մի-
քանի ժամանակ անորոշ դրուժեան մէջ մնա-
լուց չեսոյ՝ նա ներս նայեց քահանայի ննչա-
րանը:

Հայր Միրիելը հանդիստ քնած էր: Լուս-
նով լուսաւորւած նրա սպիտակահեր գլուխը
անփութութեամբ ընկած էր բարձի վրայ:
Ամբողջ երեսն այնպիսի մանկական խաղաղու-
թիւն ու անչարութիւն էր արտայայտում՝ որ
Ժան-Վալթանը երկար ժամանակ դիտում էր
նրան շփոթուած ու ինքն իրան կորցրած:
Ոչ ոք, նոյն իսկ նա ինքը, չէր կարող ա-
սել, թէ այդ բոսկէներում ինչքան բան գգաց
նա. քահանայի վրայից աչքը չէր հեռացնում.
Ըստ երևոյթին՝ նրա մէջ մի ներքին կռիւ տե-
ղի ունէր. կարծես կանգնած էր երկու ճանա-
պարհի առաջ, որոնցից մէկը կարող էր տա-
նել դէպի լոյսն ու բարին, իսկ միւսը դէպի

խաւար անդունդը: Նա պատրաստ էր և՛ շախ-
շախել այդ խաղաղ ձերունու զանգը, և՛ եր-
կիւղածութեամբ համբուրել նրա ձեռքը:...

Վերջապէս Փան-Վալժանը մօտեցաւ պա-
հարանին ու պատրաստու՛մ էր կողպէքը կոտ-
րելու, բայց նկատեց, որ կողպուած չէ, նա
արագութեամբ վերջրեց կողովում հաւաքած
ամանները և առանց ձերունու երեսին նայե-
լով՝ շտապով անցաւ դրսի սենեակը. արծաթե-
ղէնը դարսեց իւր պաշտօնակը և պատուհանից
դուրս թռաւ:

Թ

ՀԱՅՐ ՄԻՐԻԷԼԸ ՎԵՐՋԱՅՆՈՒՄ Է ԻԻՐ
ՍԿՍԱԾԸ:

Առաւօտը հայր Միրիէլի մօտ վաղեց տըն-
տեսուհին:

— Եղբայր, հարցրեց նա շփոթուած,
չ՛գիտես՝ որտեղ է կողովը:

— Գիտե՛մ, ասաց քահանան, և ցոյց տուեց
կողովը՝ որ ընկած էր պարտէզում:

— Բայց նա դատարկ է. իսկ արծաթե-
ղէնը ո՛ւր է, յուսահատութեամբ գոչեց տըն-
տեսուհին:

— Հո՛ւ, դուք արծաթի՞ մասին էք հարց-
նում, ես այդ չ՛գիտեմ:

— Տեսնո՞ւմ էք, ես որ ասում էի՝ թէ մի
փորձանք կ'պատահի՞ չէիք հաւատում: Այն թա-
փառաշրջիկն է զոգացել մեր արծաթեղէնը,
համարեա արտասուելով ասում էր պառաւը:

— Է՛հ, արժէ՞ դորա համար անհանդիստ
լինել, հեղութեամբ խօսեց հայր Միրիէլը: Վեր-
ջապէս ի՞նչ գիտէինք, որ այդ արծաթեղէնը
մերն էր և ոչ թէ ուրիշինք:

Տնտեսուհին չէր հասկանում նրա ասածը:

— Ուղիղն ասած՝ մենք ո՛չ մի իրաւունք
չունէինք այդ արծաթը մեզ սեփականացնելու,
շարունակեց ձերունին, վաղուց պէտք է չքա-
ւորներին տուած լինէինք: Իսկ այն խղճային,
իսկ որ արժանի էր դրան:

— Բայց ես ձեր մասին եմ հոգում, աս-
քացած վրայ բերեց տնտեսուհին, այժմ ի՞նչ
ամաններով պէտք է կերակուր ուտէք:

— Մենք էլ երկաթի ամաններ կ'ղնենք:

— Երկաթը կ'ժանգոտուի:

— Դէ՛հ, այն ժամանակ վաչախ ամանը
ամենքից լաւն է:

Նախանշի ժամանակ ձերունի քահանան
նոյնքան ուրախ էր ինչպէս առաջ և նոյնքան
հանաքներ էր անում ինչպէս միշտ: Պատու-

ներին կէս ծաղրով ասում էր որ ամաններ իսկի հարկաւոր էլ չեն, որովհետեւ աւելի յարձար է ուղղակի կաթի մէջ թրջել հացը և ձեռքով հանել:

— Ասացէք, ապա լսումս բան է որ մարդ ներս ընդունի արտօրականին. մըրթմըրթում էր տնտեսուհին: Ինչէ՞ր ասէք, որ չէր կարող անել նա, դեռ լաւ է, որ այդքանով պրծանք:

Քահանան նախանաչը վերջացրել էր և ուզում էր վեր կենալ, որ դուռը ձեծեցին:

— Ներս համեցէք, ձայն տուեց նա:

Դուռը բացուեց, և ներս մտան երեք ոստիկան իրանց հետ քարշ տալով ժան-Վալժանին:

— Տէր-հայր, առաջ անցաւ նորանցից մեծը:

— Հա՛, այդ դո՞ւք էք, պարոն Վալժան, կտրեց ոստիկանի խօսքը ձերունի քահանան: Այս ինչո՞ւ միտջն ամանները վերցրիք, իսկ մոմկալները ինչո՞ւ մոռացար: Սրանք էլ ինձ բոլորովին անպէտք են, իսկ դուք կարող էք ծախել մի հարիւր ուրբուր, ձեզ կ'հարկաւորուեն:

Ժան-Վալժանը լռութեամբ նայում էր քահանային:

— Ուրեմն բանից դուրս է գալիս, որ նա ձեր թոյլտուութեամբ է վերցրել արծաթեղէնը, հարցրեց ոստիկանը: Բայց այնպէս շտապ էր վազում փողոցով, որ մենք կասկածեցինք և խուզարկելով գտանք այս իրերը:

— Բայց նա ձեզ չասո՞ց, որ այդ բաները նրան մի ձերունի քահանայ է ընծայել, որ գիշերը ինքը այդ քահանայի մօտ հիւր էր: Հա՛, զրան ճանաչում եմ, իզուր էք բռնել զրան:

— Ուրեմն, կ'հրամայէք արծակէ՞նք, հարցրեց ոստիկանը:

— Ի հարկէ, պատասխանեց քահանան:

— Միթէ այս բոլորն ուղի՞ղ է: Միթէ ինձ պէտք է արծակէ՞ն. կարծես, երազի մէջ՝ խօսում է ժան-Վալժանը:

— Կարող ես գնալ, ուր որ կամքտ է. դարձաւ նրան ոստիկանը: Չ'լսեցի՞ր, ինչ ասաց տէր-հայրը:

— Պարոններ, դուք կարող էք դուրս գնալ այժմ, ես նրան ասելիք ունիմ, խօսեց քահանան զառնալով դէպի ոստիկանները, որոնք զլուխ տալով դուրս գնացին:

— Ես այս բոպէիս ձեզ էլ կ'արծակեմ, դիմեց քահանան ժան-Վալժանին վերցրէք ձեր մոմկալներն էլ, կ'հարկաւորուեն:

Եւ դուրս բերելով մոմկալները, տուեց

Ժան-Վալժանին: Վերջինս անգիտակցաբար առաւ մոմկալները: Նա ամբողջովին դողում էր, կարծես ջերմի մէջ լինէր:

— Այժմ գնացէք խաղաղութեամբ, բարեկամ, շարունակեց ծերունին: Հա՛, ի դէպ, մի բան էլ չիշեցէք, եթէ գէպքը բերի ուրիշ անգամ էլ այստեղ զիշերելու, դուրս գնալիս դոնից գնացէք: Նա գիշեր-ցերեկ բաց է:

Ժան-Վալժանը դեռ կանգնած էր դռան մօտ. Միրիէլը մօտեցաւ նրան:

— Սիրելի եղբայրս, այժմ չ'մոռանաք, որ դուք արդէն խաւարից Աստուծոյ լոյսն էք դուրս եկել և այժմ պէտք է նոր, արդար կեանք սկսէք:

Յանկարծ Ժան-Վալժանի աչքերից արցունքներ դուրս ցայտեցին և նա հեկեկալով ընկաւ ծերունու ոտքերը. փաթաթուեց նրա ծրնկներին:

— Ինձնից մի լինիր շնորհակալ, եղբայրս, այլ մեր երկնային Հօրից: Ես նրա ձեռքին միայն մի զործիք էի, նա ինձ ուղարկեց, որ օդնութեան դամբն հողուն: Այժմ յանձնուած եմ քեզ մեր ամենաողորմած Հօրը, գնա՛ խաղաղութեամբ:

ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ

նոր լոյս տեսած զրքօյկները.

1. Գործար. թէ երկրագործութիւն
2. Մնապաշտութիւն և կախարդութիւն
3. Մտերմական խորհուրդներ պատանիներին
4. Գոյութեան կոիւ (~~...~~)

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆՑԻ

վերջին հրատարակութիւնները

1. Ընտրութիւն կաթնատունների
 2. Ռուզոյֆ Վիրսով
- Դիմել հայ զրավանառանոցները:



6308

ՄԵՐ ԷԺՍ.ՆՍԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

1. Քարր երգում է
2. Ճշմարիտ մեթոլթիւնը
3. Արդար թերունին
4. Ուսման Սէրը (ճամուլի տակ է)